ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ (1920—1930-ական թվականներ)

Վ. Ե. ԴԱԼԱՔՅԱՆ

Հայաստանի խորհրդայնացումից հետո քայլեր արվեցին կառավարման նոր համակարգի ստեղծման ուղղությամբ։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ս. Լուկաշինը 1922 թ. նշում էր. «Դաշնակցականներից մեզ ժառանգություն է մնացել ամայի մի վայր։ Չկային քիչ թե շատ բավարար պետական ապարատներ (թեկուզ նույնիսկ բուրժուական)»[1]։ Այս դրությունը կրկնել են մի շարք ուսումնասիրողներ։ Դրան հակառակ, Հ. Սիմոնյանը գրում է, որ Հայաստանի Հանրապետությունում «ամենօրյա ուշադրության առարկա էր պետական շինարարությունը։ Պառլամենտի մշտական հոգսերից մեկը պետական ապարատի բյուրոկրատացման դեմ պայքարն էր, ուստի նվազագույնի էին հասցված ապարատի ծախքերը և հաստիքները։ Կաշառակերությունը դեռ արմատախիլ չէր արված, բայց կաշառակերները պատժվում էին օրենքի ողջ խստությամբ։ ...Եվրոպական դատական սիստեմի օրինակով բարելավվում էր դատական սիստեմը։ Պառլամենտական հատուկ հանձնաժողովը արդարադատության նախարարության հետ սկսեց մշակել պետական օրենսդրությունը»[2]։ Նման տեսակետ է արտահայտել նաև Հ. Կարապետյանը[3]։

Հայաստանի խորհրդայնացումից հետո հաստատվեց կառավարման մի համակարգ, որը համապատասխանեցված էր ամբողջատիրական պետության բնույթին ու նպատակներին, ղեկավարվում էր կենտրոնից և հիմնականում նմանակում վերջինիս։ Կառավարող կուսակցություն դարձած Հայկոմկուսի ղեկավարությամբ բանվոր դասակարգը, աշխատավորությունը նոր հասարակարգի ստեղծումն իրականացնում էին անհրաժեշտ փորձի բացակայության, սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծայրաստիճան դժվարին պայմաններում։ Պետություն կառավարելու փորձ չունենալը բնորոշ էր ողջ բոլշևիկյան կուսակցությանը։ Ե. Յակովլևը նշում է. «Ներկվա ընդհատակյայները, անլեգալները, քաղաքական աքսորյալները դառնում էին ժողկոմներ, հատուկ լիազորներ, արտակարգ կոմիսարներ։ Առաջին ժողկոմներից մեկը՝ Լոմովը, գրում էր. «Մեր դրությունը արտակարգ դժվար էր։ Մեր մեջ շատ էին հրաշալի, բարձր որակավորում ունեցող աշխատողներ, շատ կային բոլոր ուղղություններով Ռուսաստանն ակոսած, Պետերբուրգից, Վարշավայից, Մոսկվայից մինչև Յակուտիա և Վերխոյանսկ ամբողջ խաչի ճանապարհը շղթայակապ անցած շատ նվիրված հեղափոխականներ, բայց բոլորին պետք էր դեռ սովորել պետություն կառավարել։ Մեզանից յուրաքանչյուրը կարող էր թվարկել Ռուսաստանի գրեթե բոլոր բանտերը՝ դրանցում գոյություն ունեցող ռեժիմի մանրամասն նկարագրությամբ։ Մենք գիտեինք որտեղ են ծեծում, ինչպես են ծեծում, որտեղ և ինչպես են մենախուց նստեցնում, բայց մենք չէինք կարողանում պետություն կառավարել»։ Ի դեպ, ինքը՝ կառավարության գլուխ Ուլյանով-Լենինը ինչ-որ մեկից բողոքներ լսելով փորձի պակասի վերաբերյալ, քրքջաց. «Իսկ դուք կարծում եք մեզանից որևէ մեկն ունի՞ այդ-

1 Սարգիս Լուկաշին, Հոդվածներ, զեկուցումներ, ճառեր, Երևան, 1986, էջ 25։

2 Գրական թերթ, 10. XI. 1989։

3 Երեկոյան Երևան, 26. V. 1989։

պիսի փորձ»[4]։ Բնականաբար, այս հանգամանքը չէր կարող բացասաբար չանդրադառնալ պետության ղեկի մոտ կանգնած բոլշևիկյան կուսակցության գործունեության վրա։ Տիրապետող գաղափարախոսության համապատասխան ժողովրդի հեղափոխական եռանդը, հնի նկատմամբ ժխտողական վերաբերմունքը, անցյալը հիմնովին և վերջնականապես խորտակելու մտայնությունն ու արմատացող անհանդուրժողականությունը նպատակաուղղվեց նաև կառավարման հին մեքենան ջարդելուն ու փշրելուն։ Մայրահեղությունների այդ ժամանակահատվածում չափազանց դժվար, իսկ որոշ դեպքերում ուղղակի անհնար էր հին կառուցվածքների ու մեխանիզմների ընդունելի կողմերի, նախկին կարգերի փորձի ու գիտելիքների նպատակային օգտագործումը։ Միևնույն ճակատագրին արժանացան նաև Հայաստանի Հանրապետության երկամյա գոյության ընթացքում ստեղծված բազմակուսակցական խորհրդարանը և ժողովրդավարական մյուս կառույցները, որոնք փոխարինվեցին կենտրոնից պարտադրված նշանակովի մարմիններով՝ հեղկոմներով։ Փաստորեն Հայաստանում 1920 թ. փորձ կատարվեց կառավարման տվյալ համակարգի միջոցով Ռուսաստանի օրինակով բնակչության փոքրամասնությունը կազմող բանվորության վրա հենվելով գյուղացիական ստվար զանգվածի հետ գնալ դեպի սոցիալիզմ։ Սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծայրաստիճան դժվարին պայմաններում պետության կառավարման փորձ չունեցող կառավարող կուսակցությունը դարձած Հայկոմկուսը ելակետ ունենալով դասակարդային մոտեցումը և դրան համապատասխան էլ հիմնականում հենվելով պատրաստվածությամբ, կուլտուր-կրթական մակարդակով ու քաղաքական հասունությամբ աչքի չընկնող սակավաթիվ բանվոր դասակարգի վրա, խնդիր դրեց նրա դիկտատուրայի (որը հանգամանքների բերումով փաստորեն դարձավ կուսակցական վերնախավի դիկտատուրա) օգնությամբ ստեղծելու ժողովրդավարական կարգեր։ Ժամանակը ցույց տվեց, թե ինչպես և ինչքանով իրականացավ այդպիսի նպատակը։ Երկրում գործող միակուսակցական համակարգի պայմաններում իշխանության ու կառավարման մարմիններն իրականացնում էին այն քաղաքականությունը, որը թելադրվում և հրահանգավորվում էր կուսակցական վերադաս մարմինների կամ կուսակցական վերնախավի ու առանձին անհատների կողմից։ Այդօրինակ համակարգում կոմկուսի առանձնահատուկ դերն արդեն իսկ նշանակում էր ժողովրդավարության սահմանափակում, ենթադրում կառավարման համապատասխան կառույցի ու մեխանիզմների առկայություն, երբ կուսակցական վերնախավի ընդունած որոշումները ներկայացվում էին ողջ ժողովրդի անունից և պարտադիր էին այդ համակարգի մյուս օղակների համար։ Կուսակցական գծի անշեղ կատարումը դառնում էր սոցիալիզմի տվյալ մոդելին նվիրվածություն արտահայտելու ապացույց, իսկ նախանշված կուրսից փոքրիշատե շեղումն անդամ արժանանում էր համապատասխան վերաբերմունքի։ Այսպիսով, իշխանության նկատմամբ իր մենաշնորհը հաստատած կոմկուսը միահյուսվել էր կառավարման համակարգին և կատարում էր նաև կուսակցությանը ոչ հատուկ ֆունկցիաներ, զբաղվում զուտ տնտեսական, սոցիալական և այլ հարցերով։

Մոտավորապես այսպիսին էին կենտրոնում ստեղծված կառավարման մոդելի որոշ կողմերը, որոնցից կառանձնացնենք՝ ա) իշխանության նկատմամբ կոմկուսի մենաշնորհը, բ) համակարգի մյուս օղակների ստորադասությունը կոմկուսի համեմատությամբ, որը ենթադրում էր վերևից հրահանգավորված քաղաքականության անվերապահ կատարում, գ) աշխատավորության ենթարկվածությունն այդ համակարգին, որտեղ գործելու հնարավորությունը տրվում էր, իսկ սահմաններն ու շրջանակները վերջին հաշվով որոշվում ու թելադրվում էին կուսակցական վերադաս մարմինների կողմից։ Ավելացնենք, որ որոշ փոփոխությունների ենթարկվելով հանդերձ, ուսումնասիրվող ժամանակաշրջանում հիմնականում գործում էր կառավարման այդօրի-

4 Историки отвечают на вопросы, М., 1988, с. 33—34.

նակ մոդելը, որի գործունեության համար առանձնանում են ա) հեղկոմների գոյության և բ) խորհուրդների հաստատման ժամանակաշրջանները։

Հայտնի է, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Ռուսաստանում իշխանությունն անցավ խորհուրդների ձեռքը։ Մինչդեռ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման ժամանակ խորհուրդներ չկային և իշխանությունն անցավ տեղական հեղափոխական կոմիտեներին, որոնք ոչ թե ընտրովի, այլ նշանակովի մարմիններ էին։ Հասկանալի է, որ հեղկոմների գոյության մոտ մեկտարյա ժամանակահատվածում, որը հագեցված էր զանազան բռնություններով, ավելորդ է խոսել ժողովրդավարության կամ պետության կառավարմանն աշխատավորության իրական մասնակցության մասին։ Նշանակովի այդ մարմինների համեմատությամբ դրական քայլ էր խորհուրդների համակարգին անցնելը, որոնց առաջին ընտրությունները Հայաստանում տեղի ունեցան 1921 թ. դեկտեմբերին։ 1922 թ. ընդունված Հայաստանի սահմանադրությունը սահմանում էր իշխանության տեղական մարմինների խնդիրներն ու գործունեության հիմնական սկզբունքները։ Սահմանադրության հիմնական օրենքով խորհուրդների գավառային համագումարների համար գյուղական բնակավայրի 1000 և քաղաքի 200 բնակչից ընտրվում էր մեկական պատգամավոր։ Ընտրական այդպիսի նորմերի սահմանումը ելնում էր քաղաքի ու գյուղի բնակչության դասակարգային կազմից և նպատակ ուներ ապահովելու բանվոր դասակարգի ղեկավար դերը խորհրդային իշխանության մարմիններում[5]։ Մինչև 1925—1926 թթ. ընտրությունները գործած ընտրական այդ կարգով որոշակի սահմանափակումներ էին պարտադրվում բնակչության որոշ խավերի, իսկ բանվորների համար նախատեսվում էին արտոնություններ։ 1924 թ. դեկտեմբերին Հայաստանի Կենտգործկոմի նախագահության որոշմամբ կրճատվում էր ընտրական չափը։ 1925 թ. հունվարին Կենտգործկոմի հրահանգի համաձայն ընտրական հանձնաժողովներին հանձնարարվեց ճշտել ընտրական իրավունք ունեցողների և դրանից զրկվածների կատեգորիաները՝ վերջիններիս համար հնարավորություն ստեղծելով օրենքի սահմաններում վերականգնելու իրենց ընտրական իրավունքը։ Վերոհիշյալ փոփոխությունների համաձայն, գյուղխորհուրդներում արդեն մեկ պատգամավոր էր ընտրում յուրաքանչյուր 50 բնակիչ՝ նախկին 100-ի փոխարեն[6]։ Հարկ է նշել, որ 1925—1926 թթ. ընտրարշավը էապես տարբերվում էր նախորդ (և հաջորդ) ընտրություններից, որը կառավարման համակարգի գործունեությունն աշխուժացնելու քաղաքականության արտահայտություններից էր։ Դրա անհրաժեշտությունը մասնավորապես ընդգծեց ՀԿ(բ)Կ IV համագումարը (1925 թ.)[7]։ 1925—1926 թթ. ընտրարշավը լայնորեն անցկացնելու (բնականաբար, ժամանակի չափանիշներով) նպատակով կատարվեցին որոշ քայլեր։ Նախորդ ընտրությունների համեմատությամբ ձայնատուրկների թիվը երկրում 1,3-ից նվազեց մինչև 1,1 %-ի (այսինքն ձայնի իրավունք ստացավ ավելի քան 100.000 մարդ)[8]։ Հայաստանում համապատասխան ցուցանիշներն էին 7 և 1,2 %[9]։

1926—1927 թթ. ընտրարշավի ժամանակ ընտրողների որոշակի շերտերի նկատմամբ սահմանափակումները դարձյալ ուժեղացան։ Ընտրությունների վերաբերյալ ընդունված նոր ընտրական հրահանգում (1926 թ. նոյեմբեր) ընտրական հանձնաժողովների կարևորագույն խնդիրներից մեկը համարվում

---

5 Հայ ժողովրդի պատմություն, հ. VII, Երևան, 1967, էջ 201։

6 Խորհրդային Հայաստան. հինգ տարի 1920—1925, Երևան, 1926, էջ 9։

7 ՀԿ(բ)Կ 4-րդ համագումարի բանաձևերը, Երևան, 1926, էջ 3—4։

8 Ю. Кукушкин, Сельские Советы и классовая борьба в деревне (1921—1932 гг.), М., 1968, с. 139—141.

9 Հայաստանի նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ (այսուհետ՝ ՀՆՊՊԿԱ), ֆ. 112, ց. 3, գ. 351, թ. 14։

էր ընտրություններին շահագործողական տարրերին թույլ չտալը[10]։ Դրա հետևանքով երկրում շեշտակիորեն աճեց ձայնազուրկների թիվը 1925—1926 թթ. 1,1-ից հասնելով 3,3 %-ի[11]։ Հայաստանում գյուղական վայրերում համապատասխան ցուցանիշներն էին 0,8 և 4,9, իսկ քաղաքներում՝ 4,7 և 9,9 %։ Խորհուրդների Համահայաստանյան V համագումարին (1927 թ.) տված հաշվետվությունում ԺողԿոմխորհի նախագահ Ս. Համբարձումյանը փաստորեն բացասաբար էր վերաբերվում 1925—1926 թթ. ընտրարշավի ժամանակ թույլատրված ընտրական չափի ընդլայնմանը և դրական համարում 1926—1927 թթ. ընտրությունների ընթացքում ընտրողների որոշակի կատեգորիայի նկատմամբ ճնշման ուժեղացումն ու սահմանափակումների կիրառումը։ «Կուլակների նկատմամբ,—նշում էր նա,—մենք սուր քաղաքականություն ենք վարում։ Այն սխալը, որ մենք կատարեցինք անցյալ տարի, երբ կուլակների որոշ մասը թողինք գյուղսովետներում, այս տարի այդ սխալը վերացրինք և ձայնազրկեցինք։ Անհրաժեշտ է, որպեսզի մենք քաղաքականապես մեկուսացնենք կուլակին»[12]։ Նույն հաշվետվությունում Ս. Համբարձումյանը նշում էր. «Մինչև այս տարի ընտրություններին մասնակցում էին որոշ չափով անհարազատ տարրեր, որոնք ձգտում էին խորհուրդները գցել իրենց ազդեցության տակ, կազմալուծել աշխատավոր գյուղացիության գործունեությունը խորհուրդներում։ Դրանից դրդված, այս տարի ընտրական պայքարը ընթացավ կուլակներին և անհարազատ տարրերին քաղաքականապես մեկուսացնելու նշանաբանի տակ և ձայնազուրկների թիվը կրկնապատկվեց, եռապատկվեց»[13]։ Ամենայն հավանականությամբ, կուլակ համարվող և քաղաքական կյանքից մեկուսացվողները գերազանցապես նոր տնտեսական քաղաքականության իրականացման հետևանքով տնտեսապես ամրացող ունևոր և միշտ գյուղացիությունն էր։ Գ. Գեղամյանը նշում է, որ 1923 թ. մինչև կոլեկտիվացման սկիզբը գյուղի սոցիալական դեմքը զգալիորեն փոխվեց։ Հիմնականում տեղի ունեցավ գյուղացիության միջակացում[14]։ Հայաստանի պայմաններում փաստորեն գյուղացիության մեծամասնությունը կազմող այդ շերտի նկատմամբ էր հիմնականում իրականացվում ձայնազրկման քաղաքականությունը, որի վերաբերյալ ստորև կբերվեն փաստեր։ Ավելացնենք, որ միության մասշտաբով էլ 1926—1927 թթ. ընտրարշավի ժամանակ ընտրական հանձնաժողովների գործունեության ամենատարածված սխալը միջակների ձայնազրկումն էր[15]։

Հարկ է նշել, որ չնայած նախորդ ընտրությունների համեմատությամբ 1926—1927 թթ. ընտրարշավի ժամանակ եղած որոշակի սահմանափակումներին, այն համեմատաբար (նկատի ունենք 1928—1929 թթ. ընտրությունները) լայն բնույթ ուներ։ Դա մասնավորապես արտահայտվում էր նրանում, որ հայտնի սահմանափակումների հետ երկրամասային ու նահանգային հանձնաժողովներին իրավունք էր տրվում թույլատրել ընտրություններին մասնակցելու նախկին շահագործողական դասակարգերից ելածներին, եթե նրանք Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո զբաղվել էին հանրօգուտ աշխատանքով և ապացուցել իրենց նվիրվածությունը խորհրդային իշխանությանը[16]։ Ինչպես ցույց կտրվի ստորև, մոտեցումը միանգամայն այլ էր 1928—1929 թթ. ընտրությունների ժամանակ։ Այդ տեսակետից, կարծում ենք, իրականությանը մոտ է Համկ(բ)Կ կենտկոմի 1927 թ. փետրվարյան

10 Ю. Кукушкин, նշվ. աշխ., էջ 156—157, 163։

11 Նույն տեղում, էջ 163։

12 ՀՆՊԿԱ, ֆ. 112, ց. 2, գ. 8, թ. 128։

13 Նույն տեղում, ց. 3, գ. 7, թ. 15։

14 Գ. Մ. Գեղամյան, Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայաստանում ՆԷՊ-ի տարիներին (1921—1936), Երևան, 1978, էջ 129։

15 Ю. Кукушкин, նշվ. աշխ., էջ 163։

16 Նույն տեղում, էջ 156—157։

պլենումի այն գնահատականը, որ 1926—1927 թթ. «վերընտրական կամպանիան սովետների ընտրությունների երկրորդ լայն ու բաց կամպանիան է»[17]։ Ժամանակի չափանիշներով համեմատաբար լայն բնույթ ունեցող 1925—1926 և մասամբ 1926—1927 թթ. ընտրություններին հաջորդած 1928—1929 թթ. ընտրությունները էապես տարբերվում էին նախորդներից։ Կարծում ենք, դա պայմանավորված էր կապիտալիստական տարրերի դեմ սկսված հարձակման և նեպից հրաժարվելու քաղաքականությամբ, որը համարժեք քայլեր էր ենթադրում նաև ընտրությունների համակարգում։

Այդ պայմաններում համապատասխան քայլեր կատարվեցին նաև բնակչության որոշակի շերտերին քաղաքական կյանքից առավել վճռականորեն հեռացնելու կամ մեկուսացնելու ուղղությամբ։ 1929 թ. հունվարին «Պրավդա» թերթում տպագրվեց տեղական կազմակերպություններին ուղղված ՀամԿ(բ)Կ Կենտկոմի նամակը, որտեղ ընտրությունների առանձնահատկություններից մեկը համարվում էր դրանց դասակարգային պայքարի սրման պայմաններում ընթանալը և, մասնավորապես, խնդիր էր դրվում խորհուրդներից վռնդել կուլակների գործակալներին[18]։ Նման ոգով էր նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմի դիմումը հանրապետության աշխատավորությանը[19]։ 1928—1929 թթ. ընտրությունների ընթացքում շեշտակիորեն աճեց ձայնի իրավունքից զրկվածների թիվը։ Ստորև բերվող աղյուսակը (%-ով) պատկերացում է տալիս ձայնազրկության մասին[20]։

Տարեթիվ	Գյուղական վայրերում	Քաղաքներում
1925	1.9	36.7
1926	0.8	4.7
1927	4.9	9.9
1929	6.0	12.7
1931	3.5	9.3
1935	1.7	տեղեկություն չկա

Ինչպես տեսնում ենք, ձայնազրկության ամենաբարձր ցուցանիշն արձանագրվեց 1928—1929 թթ. ընտրությունների ընթացքում, որը, մեր կարծիքով, պայմանավորված էր Միությունում իրականացվող «մեծ բեկման» շրջադարձային քաղաքականությամբ։ Դուրս էր գալիս, որ երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանը զուգընթաց «դասակարգային թշնամիների» շարքերը ստվարանում են։

Ինչպես երևում է աղյուսակից, 1930-ական թվականներին ձայնազուրկների թիվը նկատելիորեն նվազեց, որն ամենևին էլ ժողովրդավարության արտահայտություն չէր։ Այդ տարիներին ընտրություններն ընթանում էին վարչահրամայական համակարգի ծաղկման, Ստալինի անձի պաշտամունքի, երկրում տեղի ունեցող բռնությունների պայմաններում, որն իր կնիքն էր թողնում ընտրական կամպանիաների վրա։ Ավելացնենք, որ ձայնազրկման քաղաքականությունը, ինքնին ծայրահեղություն լինելով, տեղերում իրականացվում էր «առավելագույն ակտիվությամբ», հաճախ դառնում խմբակայ-

17 ԽՄԿԿ-ն բանաձևերում..., հ. 4, (1926—1929), Երևան, 1987, էջ 195։

18 Правда, 1. I. 1929.

19 Խորհրդային Հայաստան, 21. XII. 1928։

20 Աղյուսակը կազմել ենք արխիվային հետևյալ նյութերի հիման վրա. ՀՆՊԿԱ, ֆ. 112, ց. 3, գ. 351, գ. 353, թ. 37, ց. 2, գ. 8, թ. 18, գ. 366, թ. 13, գ. 134, ֆ. 193, ց. 12, թ. 7, գ. 7, թ. 204։

նության ու անձնական հաշիվներ մաքրելու միջոց և ունենում անընդունելի դրսևորումներ։ 1926 թ. վերաբերող Դարալագյազի (ներկայիս Եղեգնաձորի շրջան) գավընտրական հանձնաժողովի զեկուցագրերից մեկում նշվում էր. «Անցյալ տարի չափազանց շատ բողոքներ են եղել ձայնազուրկների կողմից, որոնք մեծամասամբ եղել են իրավացի։ Այս տարի շատ գյուղերում գյուղընտրական հանձնաժողովներն իրենց անձնական հաշիվներից դրդված ձայնազրկել էին մի քանի տասնյակ գյուղացիների»[21]։

Խորհուրդների Համահայաստանյան VI համագումարում (1929 թ.) ժողկոմխորհի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանը նշեց. «Ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել այն քյալլագյոզությունների վրա, որ տեղի են ունեցել սովետների ընտրությունների ժամանակ։ ...Մեր ընկերները կարծում են, որ ինչքան «հուպ տվին», այնքան լավ»[22]։ Ռուսաստանում ձայնազուրկները կազմում էին 4, Վրաստանում՝ 4,5, Ադրբեջանում՝ 5,7, Ուկրաինայում 4,5, իսկ Հայաստանում՝ 6 %։ Ս. Տեր-Գաբրիելյանը շարունակում էր. «Սա քյալլագյոզություն է, մեր գյուղերում այդքան մեծ տոկոս կուլակություն ու խորհրդային իշխանության անհարազատ տարրեր չկան։ Այս տոկոսները ցույց են տալիս, որ որոշ տեղերում մեր ընկերները հետ են մղել միջակների որոշ մասը»[23]։

Խորհրդային իշխանության սկզբնական շրջանում կառավարման համակարգի մյուս հիմնական օղակը՝ պետական ապարատը, զգում էր կադրերի խիստ պակաս։ Դրա պատճառներից մեկը հին մասնագետների ու մտավորականության մի մասի նկատմամբ Հայհեղկոմի որոշ անդամների անընդունելի վերաբերմունքն էր։ Այդ գործիչները, հաշվի չառնելով տեղական առանձնահատկությունները, սխալ «ձախլիկ» դիրք էին գրավում, կողմնակից էին գերազանցապես բռնությունների։ Դրա հետևանքով հալածանքների ենթարկվեցին բազմաթիվ անմեղ մարդիկ, տեղահանվեցին և ուղարկվեցին համակենտրոնացման ճամբարներ։ Հին մասնագետների ու մտավորականության նկատմամբ այլ դիրք գրավեց ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանը։ Ելույթ ունենալով Երևանի կուսկազմակերպությունների ու արհմիությունների միացյալ նիստում (1921 թ. մայիս) նա նշում էր. «Հայաստանում ինտելիգենցիան ուրիշ բնույթ է կրում, քան Ռուսաստանում։ ...Մեր քաղաքականությունը պիտի լինի զգույշ, մեղմ։ Պետք է օգտագործենք մասնագետներին, ինտելիգենցիային, որովհետև մեր սեփական կարմիր մասնագետներ, սպեցներ չունենք։ Նրանց հանդես գալը տարիների գործ է։ Իսկ մենք չենք կարող տարիներ սպասած մնալ։ Վախենալ պետք չէ սպեցներից։ Քաղաքական իշխանությունը մեր ձեռքին է։ Երբ մասնագետները, ինտելիգենցիան կփորձեն գործել ի վնաս բանվորա-գյուղացիական գործի, մենք ունենք նրանց դեմ կռվի միջոցներ»[24]։ Կադրային պրոբլեմը լուծելու գործին միջամտեցին ՌԿ(բ)Կ Կենտկոմն ու ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն և հանրապետություն ուղարկվեցին հարյուրավոր մարդիկ։ Հարկ է նշել, որ նրանցից շատերը, հիմնականում գործելով Հայաստանից դուրս, քաջածանոթ չէին տեղական պայմաններին ու առանձնահատկություններին և ավելի շատ հակված էին կենտրոնում վարվող քաղաքականությունը մեքենայաբար նմանակելուն։ Կարծում ենք, որ դա 1920-ական թվականների սկզբների հայտնի իրադարձությունների ժամանակ (մասնավորապես բռնագրավումների քաղաքականությունը) թույլ տրված սխալների գլխավոր պատճառներից էր[25]։ Մենք բաժանում ենք Գ. Գեղամյանի այն տեսակետը, որ «Հայաստանում աշխատելու համար մոբիլի-

---

21 ՀՆՊԿԱ, ֆ. 112, ց. 4, գ. 201, թ. 86—87։

22 Նույն տեղում, ց. 3, գ. 14, թ. 73։

23 Նույն տեղում, ց. 4, գ. 201, թ. 86—87։

24 Ա լ. Մ յ ա ս ն ի կ յ ա ն, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 335—336։

25 Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր (1920—1922 թթ.), Երևան, 1987, էջ 10—27, 95—104։ Երեկոյան Երևան, 23. V. 1989։

զացված կադրերի մեծ մասը, հատկապես սկզբնական շրջանում, լավատեղյակ չէր հանրապետության տնտեսական կյանքին, այն անտանելի ծանր պայմաններին, որոնք առաջ էին քաշել ամեն դնով ֆիզիկական գոյությունը պահպանելու պահանջը, հետին պլան թողնելով մյուս բոլոր, թերևս ոչ պակաս կարևոր խնդիրները»[26]։ Կադրային սղության պայմաններում կարևոր նշանակություն էր տրվում բանվոր դասակարգի շարքերից նորաստեղծ իշխանության պահանջները բավարարող կադրեր պատրաստելու խնդրին։ Սակայն այդ գործընթացն իրականացվում էր ժամանակին բնորոշ ծայրահեղություններով ու չափազանցումներով։

1920-ական թվականների վերջերին, «մեծ բեկման» քաղաքականությամբ պայմանավորված, կտրուկ քայլեր կատարվեցին կառավարման համակարգում, որի արտահայտություններից էին «դասակարգային թշնամիներին» քաղաքական կյանքից առավել վճռականորեն հեռացնելու նշանաբանով ընթացած 1928—1929 թթ. խորհուրդների ընտրությունները (ինչպես նշվեց, այդ ժամանակ շեշտակիորեն աճեց ձայնազուրկների թիվը) և «վնասարարներին» ու «սաբոտաժնիկներին» կառավարման մարմիններից վռնդելու լոզունգով անցկացված 1929—1932 թթ. պետական ապարատի զտման լայնամասշտաբ կամպանիան։ Վերոհիշյալ միջոցառումներն էապես նպաստեցին Ստալինի անձնական իշխանության ամրապնդմանը և վարչահրամայական համակարգի թափ առնելուն, որի ընթացքում բանվոր դասակարգի եռանդն օգտագործվում էր գործող համակարգի բնույթին ու պահանջներին համապատասխան, նպատակաուղղվում երկրում իրականացվող կործանարար շրջադարձային քաղաքականության կենսագործմանը։

Կառավարման մարմինների զտման լայնածավալ կամպանիայի անցկացմամբ Ստալինն ու նրա մերձավոր շրջապատը հիմնականում նպատակ էին հետապնդում ապարատից հեռացնել իրենց քաղաքականությանը հավանություն չտվող կամ այն ուղղակիորեն մերժող ուժերին և նրանց փոխարեն ասպարեզ դուրս բերել այդ կուրսն անվերապահորեն ընդունող և հնազանդորեն կատարող կադրերին (հիմնականում բանվորներից, որոնք հասկանալի պատճառներով աչքի չէին ընկնում համապատասխան պատրաստվածությամբ)։

1920-ական թվականների վերջերին Ստալինի կողմից անձնական իշխանությունն ամրապնդելու մտածված քաղաքականության իրականացման շրջանակներում առանձնացվում է նաև պետական ապարատի զտման կամպանիան[27]։ Հայաստանում դրա անհրաժեշտությունը չկար։ Ժամանակի դրոշմը կրող, կասկածի ու անձնական թշնամանքի մթնոլորտում ընթացող այդ միջոցառումը, արդեն իսկ իր բովանդակությամբ և ուղղվածությամբ ծայրահեղություն լինելով, չէր կարող կամայականությունների պատճառ չդառնալ։ Այսպես, ԿՎՀ—ԲԳՏ ժողկոմ Ա. Գալոյանը ՀԿ(բ)Կ VIII համագումարում (1932 թ.) ստիպված էր նշել, որ զտման ընթացքում մի շարք հանձնաժողովներ թույլ են տվել «քյալլագյոզական սխալներ ու շեղումներ»[28]։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում կառավարման համակարգի կազմավորման հիմնական սկզբունքներից ու բնորոշ կողմերից մեկը բանվորականացումն էր, ինչը որոշակի պայմաններում նպատակ էր հետապնդում քաղաքական ասպարեզից հեռացնել անցանկալի կադրերին և նրանց փոխարինել գործող համակարգի բնույթին ու խնդիրներին համապատասխանող հնազանդ կատարողներով։ Կուսակցական վերնախավի հրահանգների համաձայն երկրի կյանքում բանվոր դասակարգի համար որոշվում էր համապատասխան դեր ու գործունեություն՝ որոշակիորեն սահմանված ասպարեզ։

26 Հայաստանում սովետական իշխանության ամրապնդման պատմության մի քանի հարցեր, էջ 101։

27 Մանրամասն տե՛ս Երեկոյան Երևան, 20. X. 1988։

28 Ա. Գալոյան, ԿՎՀ-ԲԳՏ հաշվետվությունը, զեկուցում ՀԿ(բ)Կ 8-րդ համագումարում, Երևան, 1932, էջ 51։

Այդ դերի խնդիրը քննելիս սկզբունքային նշանակություն ունեն հետևյալ հանգամանքները.

1. Ի տարբերություն Ռուսաստանի, որտեղ բանվորական շարժումներն ուժեղ էին, Հայաստանում այդ ելույթները նման մասշտաբներ չընդունեցին և հանրապետության խորհրդայնացման գործում վերջին հաշվով վճռական դեր կատարեց Ռուսաստանը։ Ինչպես նշում էր Ալ. Մյասնիկյանը, «Հայաստանում մենք էլ գիտենք, որ պրոլետարիատը սակավաթիվ է, եթե բանվորական հեղափոխություն Հայաստանն առաջինը սկսեր, այդ նրան չէր հաջողվի։ Հասկանալի է, որ Ռուսաստանի խոշոր բանվորությունն այս հարցում օգնեց Հայաստանին»[29]։

2. Հանրապետությունը գտնվում էր տնտեսական ու քաղաքական ծայրաստիճան ծանր վիճակում։ Արդյունաբերության անկման և օրավուր սաստկացող պարենային ճգնաժամի պայմաններում խիստ կրճատվել էր բանվոր դասակարգի թիվը, որի մեծ մասն ապաստան էր գտել գյուղում և իր գոյությունը պահպանում էր գյուղատնտեսությամբ, արհեստավորությամբ և նույնիսկ առևտրով։ Փաստորեն խորհրդային իշխանության հաստատումից հետո դեռևս շարունակվում էր փոքրաթիվ բանվոր դասակարգի փոշիացման ու ապադասակարգայնացման գործընթացը։ Վիճակն ավելի էր բարդացնում ավելի քան 200.000 արևմտահայ գաղթականության գոյությունը։

3. Խորհրդային իշխանության առաջին տարիներին Հայաստանը գերազանցապես գյուղատնտեսական և շատ ավելի մանրգյուղացիական երկիր էր, քան Ռուսաստանը։ Արդյունաբերության թույլ զարգացման հետևանքով բանվոր դասակարգը փոքրաթիվ էր, բնակչության մեջ շոշափելի տեսակարար կշիռ չուներ, ցածր էր նրա կուլտուր-կրթական ու տեխնիկական մակարդակը, քաղաքական հասունությունը, չնչին էր հին կադրային ու բարձրորակ բանվորների քանակը։ Ալ. Մյասնիկյանը նշում էր, որ «ինդուստրիալ պրոլետարիատ չունենք։ Եղած սակավաթիվ բանվորությունը կապված է գյուղի հետ»[30]։ Հիշարժան է նաև հանրապետության ղեկավարներից մեկի՝ Ս. Համբարձումյանի, հետևյալ միտքը. «Հայաստանի բնակչության սոցիալ-դասակարգային կառուցվածքի առանձնահատկությունն այն է, որ նրա ահագին, ճնշող մեծամասնությունը, հիմնական միջուկը հանդիսանում է սակավահող գյուղացին, որ ցածր տեխնիկա ունի և կուլտուրական համեմատաբար ստոր մակարդակի վրա է կանգնած։ Պրոլետարիատը միայն աննշան փոքրամասնություն է կազմում, շատ բարակ շերտ, նրա մեծամասնությունը դեռևս կապված է հողի հետ, որակով բարձր չէ արտադրության մեջ»[31]։ Չնայած հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը զուգընթաց բանվոր դասակարգի թվաքանակի աճին, ուսումնասիրվող ժամանակաշրջանում բնակչության մեծամասնությունը կազմում էր գյուղացիությունը։ Նման պայմաններում, եթե նույնիսկ ընդունենք անընդունելին՝ թե այդ տարիներին գոյություն ունեցող ռեժիմը ոչ թե կոմկուսի դիկտատուրա էր, այլ պրոլետարիատի՝ անգամ այս դեպքում, նշանակում է, քաղաքական իշխանությունը գտնվում էր ազգաբնակչության փոքրամասնությունը հանդիսացող խավի ձեռքում։ Այս պարագայում պրոբլեմատիկ է դառնում նաև բանվորագյուղացիական դաշինքի խնդիրը։ Փաստորեն այդ դաշինքում մեծաքանակ գյուղացիությանը վերապահված էր երկրորդական դաշնակցի դեր՝ թեկուզև այն պատճառով, որ գյուղացու ընտրական քվեն մշտապես զգալիորեն փոքր էր բանվորի քվեից։ Իրականում գյուղացիությունը զրկված էր սեփական քաղաքական կազմակերպություն ունենալու հնարավորությունից և գործում էր ժողովրդի փոքրամասնությունը կազմող բանվորության անունից հանդես եկող կոմունիստական կուսակցության դիկտատուրայի պայմաններում։

---

29 Ալ. Մյասնիկյան, Խորհրդային Հայաստանի ուղին, Թիֆլիս, 1924, էջ 17։

30 Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 334։

31 Խորհրդային Հայաստան. հինգ տարի 1920—1925, էջ 27—28։

4. Հայաստանի Հանրապետության ընդամենը երկամյա գոյության ընթացքում բանվոր դասակարգը կարճատև ու թռուցիկ ձևով շփվեց նորաստեղծ ժողովրդավարության հետ, որը չէր կարող չանդրադառնալ նրա քաղաքական հասունության ու կազմակերպվածության վրա։ Դա իր հերթին չէր կարող բարենպաստ ազդեցություն չունենալ խորհրդայնացումից հետո իշխանության և կառավարման մարմիններում բանվորների գործունեության վրա։

5. Իշխանության նշանակովի մարմինների՝ հեղկոմների գոյությունը՝ սահմանափակում էր առանց այն էլ քանակական ու որակական առումով աչքի չընկնող բանվոր դասակարգի (և ընդհանրապես աշխատավորության) հնարավորությունները պետության կառավարման համակարգում։

6. Խորհրդայնացման շնորհիվ կառավարող կուսակցություն դարձած Հայաստանի կոմկուսի ղեկավարությամբ աշխատավորությունը նոր հասարակարգի ստեղծումն իրականացնում էր առաջին անգամ, սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծայրաստիճան դժվարին պայմաններում։ Այդ գործընթացում հավանաբար չի կարելի հաշվի չառնել նաև բանվորության հոգեբանական վիճակն ու ազգային բնավորության առանձնահատկությունները։ Հետագայում հանրապետության զարգացմանը զուգընթաց վերոհիշյալ գործոնները ենթարկվեցին փոփոխությունների։ Մասնավորապես ինդուստրացման շնորհիվ բանվոր դասակարգի քանակական, որակական ու կառուցվածքային կազմում կատարվեցին լուրջ տեղաշարժեր, որոնք իրենց հերթին անդրադարձան պետության կառավարման համակարգում նրա գործունեության վրա։

7. Խորհրդային իշխանության առաջին տարիներին շարունակում էր աճել ժամանակի սոցիալական սուր պրոբլեմներից մեկը՝ գործազրկությունը, որը լուրջ դժվարություններ էր ստեղծում բանվորության համախմբման համար, բացասական ներգործություն ունենում նրա քաղաքական դիմագծի, բարոյահոգեբանական վիճակի և ողջ գործունեության վրա։

8. Ուսումնասիրվող ժամանակաշրջանում գոյություն ունեցող համակարգի միջուկը, ամբողջատիրությունը պայմանավորող ուժը կոմունիստական կուսակցությունն էր, որի վերնախավի որդեգրած քաղաքականությունը դառնում էր կառավարման համակարգի օղակների (խորհուրդներ, պետական ապարատ և այլն) գործունեության առանցքն ու հիմքը, համապատասխան կառուցվածքներում գործող մեխանիզմների շարժիչը։ Այսպիսի պայմաններում որոշակիորեն կամ խստորեն սահմանափակվում, իսկ որոշ դեպքերում նաև բացառվում էին համակարգի մնացած օղակների համեմատաբար ինքնուրույն գործելու հնարավորությունները, նեղացվում ու սահմանվում էին գրանցում ընդգրկված հասարակական շերտերի՝ նաև բանվոր դասակարգի գործունեության շրջանակները։ Իսկ որոշ հանգամանքներում նույնիսկ այդ պարբերաբար նեղացվող շրջանակներում գործելու դրսևորումներն արժանանում էին համապատասխան գործելակերպի՝ բռնությունների ու անօրինությունների։ Հասկանալի է, որ այն ամենը, ինչը բնորոշ էր տվյալ ժամանակաշրջանում գոյություն ունեցող համակարգի միջուկը հանդիսացող կոմունիստական կուսակցության գործունեությանը՝ իր անընդունելի և ընդունելի կողմերով արտահայտվում էր կառավարման համակարգի աշխատանքում։ Ավելացնենք, որ այդ համակարգում կոմկուսի առանձնահատուկ դերը (անկախ դրա պատճառներից) արդեն իսկ նշանակում էր ժողովրդավարության սահմանափակում, ենթադրում այլ օղակների ստորադաս ու երկրորդական կարգավիճակ։

Այսպիսով, ուսումնասիրվող ժամանակաշրջանում բանվոր դասակարգը դրված էր այնպիսի համակարգում, որտեղ տիրապետում էր մեկ գաղափարախոսություն, մերժվում էր ազատությունը, պահանջվում էին վերևից թելադրված քաղաքականությունն անվերապահորեն իրականացնողներ։ Այդպիսի համակարգում որոշակի պայմաններում կուսակցական վերնախավի կողմից հրահանգավորված ուղղությունը մատուցվում էր որպես նախ և առաջ բանվոր դասակարգի շահերից բխող, սրանց ինչ ներկայացվում քաղաքական

կյանքին չմասնակցող աշխատավորության կողմից ու անունից։ Իրականում բանվոր դասակարգը հեռացված էր քաղաքական ասպարեզից և նրա եռանդն օգտագործվում ու շահարկվում էր, նպատակաուղղվում ամբողջատիրական քաղաքականության կենսագործման։ Իշխանության ու կառավարման մարմիններում առաջ քաշված բանվորները կամա թե ակամա դառնում էին նորաստեղծ խորհրդային բյուրոկրատիայի համալրման աղբյուր, բյուրոկրատիա, որը վարչահրամայական համակարգի և Ստալինի անձնական իշխանության պատվարն ու հենարանն էր։

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПРОЦЕССА ФОРМИРОВАНИЯ ОРГАНОВ ВЛАСТИ И УПРАВЛЕНИЯ В АРМЕНИИ (1920—1930-е годы)

В. Е. ДАЛЛАКЯН

Р е з ю м е

После советизации Армении была создана система управления, которая отвечала задачам тоталитарного государства. В 1920—1930-е годы одним из основных принципов формирования органов власти и управления было все более широкое вовлечение в них рабочих. В конце 20-х годов, обусловленные сталинской политикой «большого перелома», в общественно-политической жизни страны произошли соответствующие изменения, в частности, проведенные под девизом вытеснения «классовых врагов» из органов власти, выборы Советов 1928—1929 гг. и широкомасштабная кампания чистки госаппарата 1929—1932 гг., которая была претворена в жизнь под лозунгом удаления из органов управления «вредителей» и «саботажников». Эти мероприятия существенно способствовали укреплению личной власти Сталина и развертыванию командно-административной системы.